ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

30 ՄԱՅԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 161-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,12391 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող 0,12391 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-034-0118-0002 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման: Հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024UWUBJZ:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

30 ՄԱՅԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 162-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09666 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Գոմք բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,09666 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-019-0009-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Գոմք, 5-րդ փողոց, 8/4 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025DSEFSJ):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

02 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 163-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Վայքի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 02.06.2025թ-ի թիվ 1 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 51/23 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0024-0374 կադաստրային ծածկագրով, Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/3 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0010-0011 կադաստրային ծածկագրով, Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/4 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0010-0010 կադաստրային ծածկագրով, Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/6 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0010-0008 կադաստրային ծածկագրով, Զառիթափ բնակավայրի 9-րդ փողոց 41/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-022-0092-0044 կադաստրային ծածկագրով, Գոմք բնակավայրի 3-րդ փողոց 2/4 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-019-0004-0001 կադաստրային ծածկագրով, Գոմք բնակավայրի 5-րդ փողոց 7 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-019-0025-0023 կադաստրային ծածկագրով, Գոմք բնակավայրի 5-րդ փողոց 7/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-019-0025-0024 կադաստրային ծածկագրով հողամասերն օտարելու նպատակով հայտարարել աճուրդ և աճուրդի անցկացման օր նշանակել 2025 թվականի հուլիսի 4-ը:
2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Համայնքի ղեկավարի 02.06.2025 թ-ի
Թիվ 163-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վայքի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերի բաց դասական աճուրդ վաճառք՝

ԼՈՏ **1.** Ք.Վայք Ջերմուկի խճ. 51/23 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-003-0024-0374/, 0.00033 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 6 200 ՀՀ դրամ:

ԼՈՏ **2.** Ք.Վայք Ջերմուկի խճ. 45/3 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-003-0010-0011/, 0.02132 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 426 400 ՀՀ դրամ:

ԼՈՏ **3** Ք.Վայք Ջերմուկի խճ. 45/4 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-003-0010-0010/, 0.02608 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 521 600 ՀՀ դրամ:

ԼՈՏ **4** Ք.Վայք Ջերմուկի խճ. 45/6 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-003-0010-0008/, 0.03451 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 690 200 ՀՀ դրամ:

ԼՈՏ 5 Ջառիթափ բն., 9-րդ փ. 41/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-022-0092-0044/, 0.04015 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 87 500 ՀՀ դրամ:

ԼՈՏ 6 Գոմք բն., 3-րդ փ. 2/4 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-019-0004-0001/, 0.29654 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 1 482 700 ՀՀ դրամ:

ԼՈՏ 7 Գոմք բն., 5-րդ փ. 7 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-019-0025-0023/, 0.15452 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 336 550 ՀՀ դրամ:

ԼՈՏ 8 Գոմք բն., 5-րդ փ. 7/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /ծածկ՝10-019-0025-0024/, 0.15428 հա հողամասը, մեկնարկային գին սահմանելով՝ 336 030 ՀՀ դրամ: Աճուրդը տեղի կունենա 2025թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին Վայքի համայնքապետարանի շենքում: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, աճուրդին մասնակցության համար սահմանված 15 000 դրամի չափով վճարի անդորրագիր, անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի կայացման օրվանից 3 օր առաջ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վայքի համայնքապետարան /հեռ. 098 992894/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 164-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.05. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 2025թ. մայիսի 26-ի «Ժառանգատու Ղամբար Նյուտոնի Ղամբարյանին սեփականության իրավունքով պատկանած Վայք համայնքի Վայք քաղաքի Մյասնիկյան փողոց 17 հասցեում գտնվող բաղնիքի շենքի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված 0,042 հա բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը համակցված տարածական պլանավորման նախագծին համապատասխանեցնելու մասին» թիվ 158-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
1.1 Որոշման հղման մեջ լրացնել «Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի 3.2 կետով, ինչպես նաև հաշվի առնելով Վայք քաղաքի ավագանու 28.04.2005 թվականի թիվ 16 որոշումը» բառերը:
1.2 Որոշման բովանդակության մեջ ավելացնել նոր կետ՝ «Ժառանգատու Ղամբար Նյուտոնի Ղամբարյանին սեփականության իրավունքով պատկանող, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության շինության գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շին. թույլտվության» բովանդակությամբ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 165-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայք համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել 2025 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 166-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022Թ ԱՊՐԻԼԻ 7-Ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայք համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2022թ. ապրիլի 7-ի «Վայք համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 69-Ա որոշումը:
2. Հաստատել Վայք համայնքի.
   2.1 խորհրդի նոր կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
   2.2 Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի.
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 167-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ «ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 16.05.2025 թվականի թիվ 43-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Չարենցի 6 հասցեում գտնվող, 10-003-0021-0015 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող մարզադպրոցի շենքը՝ 1044,75 քմ. տարածքով և 0.1364 հա մակերես հողատարածքով (վկայական՝ 2795922, տրված՝ 15.07.2010թ.), անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով հատկացնել «Վայքի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ